Ես արդէն կարդում եմ ձեզանից շատերի դէմքի վրայ արտայայտուած զարմանքը. մի՞թէ ես հերքո՞ւմ եմ ազգային եկեղեցու նշանակութիւնը. գիտեմ նոյնպէս, որ մեր quasi — ազգասէրները կարող են կնքել ինձ եւ դաւաճան, ուրացող անունով, որ ես իբր թէ նշանակութիւն չեմ տալիս "Հայաստանեայց Առաքելական Եկեղեցու"։ Ոչ, ես մեծ նշանակութիւն եմ տալիս ազգային եկեղեցուն եւ չեմ կարող չտալ, որովհետեւ Հայոց ազգային եկեղեցին մի այնպիսի հաստատութիւն է, որ ցոլացնում է իր մէջ ազգի բազմադարեան կեանքը, այն է՝ նրա կրած տանջանքները, ցաւերը, ուրախութիւնները, մի խօսքով, ազգի հոգեբանական՝ ուրեմն ամենակարեւոր կողմը, ազգի անցեալը, պատկերը, պատմութիւնը։ Ես այդ շատ լաւ գիտեմ, բայց գիտեմ նոյնպէս, որ ո՛չ մի՝ փոքր ի շատէ խելքը գլխին կրթուած Հայ-կաթուղիկեայ, Հայ-բողոքական՝ չէ կարող ուրանալ ազգային եկեղեցին, չէ կարող չճանաչել Գրիգոր Լուսաւորչին, Մեծն Ներսիսին, Սահակին, Մեսրոպին, Ներսէս Շնորհալուն, Ներսէս Լամբրոնացուն, որոնք նոյնքան թանգ պէտք է լինին եւ են Հայ-կաթուղիկէի, Հայ-բողոքականի համար, ինչքան են Հայ-լուսաւորչականի համար։ Ես միայն կամեցայ հասկացնել ձեզ, որ դաւանաբանական հարցերի համար չպէտք է մի եւ նոյն ցեղի, ազգի անդամները, եղբայրները միմեանց հալածեն։

Այս բոլոր ասածիցս յետոյ գալիս եմ իմ առաջուայ խօսքին թէ՝ ազգի լուսաւորութեան